Doi: 10.56737/2953-7843-2024.03-133

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆԻՊՊՈՒՐՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍԸ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին քրիստոնեական տաճարի՝ Էջմիածնի Մայր Աթոռի հիմնադրման մասին Ագաթանգեղոսից հետեւյալ պատմությունն է մեզ հասել. Գրիգոր Լուսավորիչը վիրապից դուրս գալուց հետո հռիփսիմյան կույսերի նահատակության վայրում հավաքված մարդկանց պատմում է, թե ինչպես իրեն մի ահավոր տեսիլք է երեւացել. երկնքի խորանաշեն ծածկը բացվել է, եւ լույսի կերպարանքով մի այր հրաշքներ է ցույց տվել իրեն։ Տեսել է, որ վերեւից ներքեւ, մինչեւ երկիր հասնելով, լույս է հոսում, որի մեջ մարդկային կերպարանքով անհամար զորք կար։ Զորքի առջեւից մի բարձր ու ահեղ մարդկային կերպարանք էր ընթանում, ձեռքին՝ ոսկե մեծ կռան։ Նա իջնում է քաղաքի մեջտեղում, խփում է լայնատարած գետնին, եւ անդունդների սանդարամետից անչափ թնդյուններ են լսվում, «եւ ամենայն երկիր յերեւելիս, յական տեսանելեաց բաւելոյ, հարթ հաւասար դաշտաձեւ յատակեցաւ»[2]։

Այնուհետեւ արքունի ապարանքի մոտ խոշոր բլրի մեծությամբ ճախարակաձեւ ոսկե խարիսխ է տեսնում՝ վրան բարձր հրեղեն սյուն, վերին մասում՝ ամպե խոյակ՝ վրան խաչ։ Նաեւ ամպեղեն ուրիշ երեք խարիսխ է տեսնում՝ սյուներով եւ հրեղեն խոյակներով, մեկը՝ Գայանեի նահատակման վայրում, երկրորդը՝ Հռիփսիմեի, երրորդն էլ՝ հնձանում։ Երեք սյուների վրա էլ լուսեղեն խաչեր կային, բայց դրանք ավելի ցածր էին, քան նախորդ լուսեղեն սյան խոյակը։ Այդ չորս սյուների խաչերն իրար էին կապվում կամարներով, որոնց վրա գմբեթաձեւ խո-

---

[1]* *Ստացվել է՝ 27.01.2024, գրախոսվել է՝ 5.02.2024։*

էլ. հասցե՝ martoyangagik474@gmail.com։

[2] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (այսուհետեւ՝* ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ*), աշխատ.՝ Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ս. Կանայեանցի, Տփղիս, 1909, § 735։*

բանարդի տեսքով ամպեղեն շինվածք կար։ Շինվածքի վրա տեսնում է տերունական խաչով աստվածակերտ աթոռ։ Համատարած լույսը խառնվում էր խաչի ճառագայթներին եւ սյուն դառնալով՝ ցայտում խարիսխների ներքին սյուների մեջ։

Այնուհետեւ հորդաբուխ աղբյուր է բխում, որը ծավալվելով՝ կապույտ ծովի է վերածվում։ Հետո հրեղեն սեղաններ են երեւում՝ ամեն մեկի վրա սյուն եւ խաչ, որոնք փայլում էին ինչպես աստղերի բազմությունը։ Ապա սեւագույն այծերի անթիվ հոտեր են հայտնվում եւ ջուրն անցնելով՝ վերածվում լուսեղեն գեղմով սպիտակ ոչխարների։ Հանկարծ ոչխարներից ծնված գառների մի մասը, գետն անցնելով, թուխ գայլեր են դառնում եւ սկսում են կոտորել հոտերը. «Եւ մինչ դեռ նայէի՝ եւ տեսի, եւ բուսան թեւք հօտիցն, եւ յարեաւ հեղեղ հրեղէն, եւ արկեալ տարաւ զգայլսն»[3]։ Այնուհետեւ Գրիգոր Լուսավորիչն սկսում է տալ տեսիլքի բոլոր պատկերների (սյան, խարսխի, կամարների, գայլերի, ոչխարների, սեղանների եւ այլն) մեկնությունը՝ ելնելով քրիստոնեական հավատքի դիրքերից։

Ապա երկնային լուսավոր այրը Գրիգորին պատվիրում է իր ցույց տված տեղում Աստծու անվան տաճար կառուցել, ինչը ջանասիրաբար կատարվում է[4]։ Կառուցվում է Հայրապետաց կաթողիկե Մայր եկեղեցին, որը կոչվում է Էջմիածին, այսինքն՝ այստեղ է, որ իջավ (ըստ Լուսավորչի տեսիլքի) Միածին Որդին Աստծու՝ երկնային լուսավոր, հրեղեն Այրը։

ՆԻՊՊՈՒՐՅԱՆ ԵՐԿՆԱՅԻՆ ՏԱՃԱՐԸ

Գրիգոր Լուսավորիչը երկնքից երկիր ձգվող լույսի հոսքի միջով իջնող զորքի մեծաքանակությունը ցույց տալու համար գարնանը պատուհաններից եւ երդիկներից թափանցող լույսի մեջ փոշեհատիկների համեմատությունն է կատարում. «Եւ ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ հիւղէի որ ի ժամանակս արեգակնակէզ գարնանուոյն ըստ պատուհանացն կամ լոյսանցոյց երդոցն ի շողսն խաղասցէ բազմութիւն մանրամաղ փոշւոյն նոյնպէս եւ զաւրքն ընդ լուսոյն լցին զառ ի ստորեւս ամենայն...»[5]։

---

[3] *Նույն տեղում, § 740։*
[4] *Նույն տեղում, § 755, 770, 841։*
[5] *Նույն տեղում, § 734։*

Լույսն ընդհանրապես պատուհաններից եւ երդիկներից տարվա բոլոր եղանակներին էլ կարող է ներթափանցել, բայց այն, որ Լուսավորիչը գարնան եղանակն է մատնանշում, հիմք է տալիս մտածելու, որ Ագաթանգեղոսը ներկայացնում է գարնան հետ կապված հին օրացուցային պատկերացումների վերաձեւակերպումը, որտեղ փառաբանվել է Աստծու գարնանային գահաթոռը։

Ցավոք, պատմությունը լռում է այն մասին, թե ինչպիսի օրացույց է կիրառվել Գրիգոր Լուսավորչի ժամանակների Հայաստանում, բայց գահաթոռի վերաբերյալ վկայություն կա շումերական բնագրերից հայտնի աշխարհի հնագույն՝ Նիպպուրյան լուսնաարեգակնային օրացույցի առաջին՝ տարեմուտ-գարնանամուտ ամսում։ Այդ ամիսը գրանցված է BARA$_2$–ZA$_3$–GAR *շումերագրամով, որը «սրբավայր», «տաճար», «գահ» կամ «նրա ամիսը, ով նստում է գահին» իմաստներն է արտահայտում։ Գահը գտնվում է տաճարի կենտրոնում։ Տաճարի եւ գահի շինարարությունը որպես աշխարհի կենտրոնի նորոգում է ընկալվել։ Դա ժամանակների սկզբի, տարեսկզբի վայր է, որի գահն ամեն տարեմուտի պետք է նորոգվի, քանի որ վերջին՝ 12-րդ ամսում աշխարհն ավերմունքի եւ քաոսի է վերածվում*[6]*։*

Հունարեն զոդիակոս անունով հայտնի կենդանաշրջանի գոտու վաղ շրջանի գիտակ, շումերագետ Վ. Եմելյանովը BARA$_2$ *գաղափարագրի համար, առանձին վերցրած, հավանական է համարել շումերերեն վանկագիր* parakk*-ը՝ թարգմանաբար հենց «գահ»-ը՝ տաճարի այն կենտրոնական մասը, որը բախտորոշման եւ դատաստանի վայր է*[7]*։*

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԻ ՏԱՃԱՐԸ

Շումերական բնագրից մեկում ասվում է. e$_2$–a–bara$_2$ –babbar$_2$... ḫur–sag̃–za–gin$_3$ –na–an–ki–a–ki–ḫe$_2$–us$_2$–sa–am$_3$*։ Թարգմ.՝ «Տաճարի փայլատակող գահը՝ լազուրե լեռը՝ անտառով ծածկված, երկրին եւ երկնքին է հասնում»*[8]*։ Այստեղ* bara$_2$*-ն, ըստ Վ. Եմելյանովի, համեմատելի է* ḫur–sag̃*-ի՝ անտառածածկ լեռանը, որն իրար է միացնում երկինքն ու երկիրը, պատ-*

---

[6] *Տե՛ս* В. Емельянов, Ниппурский календарь и раняя история зодиака, Санкт Петербург, 1999, *էջ 47։*

[7] *Նույն տեղում, 48–50։*

[8] *Նույն տեղում։*

կանում է նախասկզբնական այն վայրի տիրոջը, որտեղ տաճարն է կառուցված[9]։ Մեր դեպքում շումերական լազուրե լեռը համադրելի է այն մեծ բլրին, որը Գրիգոր Լուսավորիչը համեմատում է ճախարակաձեւ ոսկե խարսխի հետ. «Եւ տեսանէի ի մէջ քաղաքիս մաւտ յապարանսն արքունի խարսխաձեւ ճախարակաձեւ խարիսխ ոսկի մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր»։ Երկինքը երկրին միացնողը վերեւից իջնող լույսի հոսքն է. «Եւ լոյսն հոսեալ վերուստ ի վայր մինչեւ յերկիր հասանէր»։ Խարսխի՝ պատվանդանի վրա հույժ բարձրացող հրեղեն սյան խոյակն էլ («թակաղաղը») ամպե է, այսինքն՝ մինչեւ երկինք է ձգվում. «Եւ ի վերայ նորա (բլրի.– Գ. Մ.) սիւն մի հրեղէն բարձր մինչեւ յոյժ եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ եւ խաչն լուսոյ ի վերայ նորա»։

Եթե ոսկե խարիսխը՝ պատվանդանը, ճախարակաձեւ է, ուրեմն կլոր տեսք է ունեցել։ Տարվա ամիսների վրա ձեւված կենդանակերպի գոտին նույնպես անիվի տեսք ունի, ինչպես որ ճաղավոր անիվ է նաեւ թել մանելու ճախարակը։ Նույն «ճախրի (ճախարակի) ֆալաք»-ն է՝ բախտի անիվը, որի պտույտին, քարայրում նստած, հետեւում է «Սասնա ծռեր» էպոսի Փոքր Մհեր – Միհր Արեւը՝ սպասելով իր ժամանակին քարայրից դուրս գալուն[10]։ Ինչո՞ւ է բախտի անիվ. որովհետեւ կենդանաշրջանի համաստեղություններով հնում եւ այժմ գուշակություններ են անում մարդկային բախտի եւ ճակատագրերի վերաբերյալ։ Ահա թե ինչու BARA2 *գաղափարագիրը նաեւ բախտորոշման վայրի իմաստն է արտահայտել։*

Տասներկու համաստեղություններից կազմված կենդանակերպի գոտին Երկրից նայողի համար, որպես անիվ, հավերժական պտույտի մեջ է։ Այդ պատճառով նրա մշտապես պտտվող վեց համաստեղություններն են տեսանելի, մյուս վեցը հորիզոնից ներքեւ են գտնվում։ Տեսանելի համաստեղությունները 180 աղեղնային աստիճանի բլրաձեւ կամար են կազմում, որն էլ հենց այն բլուրն է եղել (շումերական սրբազան տաճարի լազուրե լեռը), որի մասին խոսում է Լուսավորիչը։ Այսինքն՝ այս բլուր-կամարը խարիսխ-կենդանաշրջանի՝ կենդանակամարի կիսված գոտու կամ նրա մի հատվածի պատկերն է։

---

[9] *Նույն տեղում, 48։*

[10] *Գ. Սրվանձտյանց, Երկեր, հտ. Ա., Երեւան, 1978, էջ 88։ Թելը ժամանակի հետ է կապված, ինչպես դա ժողովրդական մտածողությունից էլ է երեւում։ Երբ ուզում են ասել՝ մարդը վախճանվեց, ասում են՝ նրա կյանքի թելը կտրվեց։*



Նկ. 1 Կենդանակերպերի անվանեւ գոտին եւ օրահավասարներով ու արեւադարձերով ձեւավորված խաչի պատկերը

Խարսխից հրեղեն սյունն է բարձրանում, որի վերին մասում «թակաղաղն» է՝ խոյակը՝ լուսե խաչով: Հայկական ճարտարապետության մեջ խոյակի վրա երբեմն ցանց է դրվագվում, երբեմն՝ խաղողի ողկույզ, նուռ, խաչ, արծիվ, զույգ աղավնի, խոյի պարուրաձեւ եղջյուրներ, նույնիսկ՝ Տիրամայրը Մանկան հետ, բայց այս մանրամասն անվանադրելու համար բացառապես խոյն է ուղեցույց համարվել: Բանն այն է, որ մեզնից մոտավորապես 4200–2200 տարի առաջ կենդանակերպի խոյ համաստեղությունում էր գտնվում տարեմուտն ավետող գարնանային օրահավասարի կետը: Այդ կետից ուղղահայաց ուղիղ գիծ քաշելու դեպքում կհասնենք աշնանային օրահավասարի կետին՝ Կշեռք համաստեղությունում: Եթե հորիզոնական ուղիղ գիծ անցակացնենք նաեւ արեւադարձերի կետերի միջեւ (Խեցգետին համաստեղությունից մինչեւ Այծեղջյուր), ապա դա կհատվի օրահավասարների գծի հետ եւ խաչի պատկեր կձեւացնի (տե՛ս նկ. 1), որն էլ հենց այն խաչն է, որ մասին Լուսավորչի տեսիլքում ասվում է, թե հրեղեն սյան խոյակի վրա էր երեւում: «Հրեղեն սիւն» ասելով, ուրեմն, հնում գարնանային օրահավասարից աշնանային օրահավասար ձգվող առանցքն են հասկացել (տե՛ս նկ. 2), քանի որ հենց այս առանցքն է որոշել տարվա երկու հիմնական՝ տաք եւ ցուրտ եղանակների՝ ձմռան եւ ամռան հերթագայությունը: Ժողովուրդը ցայժմ էլ տարվա գաղափարն արտահայտելու համար երկու հիմնական եղանակներն է հիշում՝ «ամառ-ձմեռ», ինչպես որ շումերներն էին տարին երկու կեսի՝ շոգ եւ ցուրտ մասերի բաժանում[11]:



Նկ. 2 Տարին 2 մասի բաժանող երկնային սյուն-առանցքը՝ Խոյից մինչեւ Կշեռք

Օրացուցային սյան պատկերը պահպանվել է նաեւ հայկական հմայախոսություն-աղոթքում, որտեղ ո՛չ ճյուղ, ո՛չ տերեւ, ո՛չ արմատ ունեցող ծառի, այսինքն՝ սյան վրա

[11] *Տե՛ս* В. Емельянов, Ниппурский календарь и раняя история зодиака, Санкт Петербург, 1999, *էջ 45:*

մի արծիվ է նստել եւ ուզում է ուտել մարդկանց միսը, կուրացնել նրանց, խմել ուղեղը, բայց Արեգակի սրտում գտնվող 365 հրեշտակները հմայում, կապում են նրան[12]:

Գրիգոր Լուսավորիչն իր տեսիլքի երեք այլ սյուներ էլ է նկարագրում այն տեղերում, ուր Հռիփսիմյան կույսերն էին նահատակվել: Դրանք ավելի ցածր են, քան առաջին սյունը: Մեկը բարձրանում է Գայանեի մարտիրոսության տեղում, երկրորդը՝ Հռիփսիմեի, երրորդը՝ հնձանում: Բոլոր չորս սյուներն իրար միանում են կամարներով եւ կապվում գմբեթով: Ամբողջ այս շինվածքի կատարին է գտնվում հրեղեն աթոռը՝ տերունական խաչը վրան: Այնուհետեւ շողացող համատարած լույսը խառնվում է խաչի ճառագայթներին եւ ձեւացնում հրեղեն սյունը[13]:

Թե այդ ինչ երեք սյուների մասին է խոսքը, բացատրությունը տալիս է տեսիլքի շարունակությունը. հանկարծ հորդ աղբյուր է բխում եւ դաշտերում ծավալվելով՝ դառնում է ծով: Հետո սեւ այծերի հոտեր են հայտնվում, որոնք ջուրն անցնելով՝ ոչխարներ են դառնում, իսկ նրանց բուրդը սպիտակելով փայլում է[14]: Ակնհայտ է, որ այստեղ կենդանակերպի Այծեղջյուր համաստեղությունից մինչեւ Խոյ համաստեղություն ընկած հատվածն է նկարագրվում. ընդամենը 4 համաստեղություն՝ յուրաքանչյուրն իր 30 աղեղնային աստիճանի մասնաբաժնով: Այծերի հոտն Այծեղջյուր համաստեղությունն է, հորդ աղբյուրը՝ Այծեղջյուրին հաջորդող Ջրհոս համաստեղությունը, ծովը Ձկներ համաստեղության մասնաբաժինն է, իսկ ջուրն անցած եւ այծից ոչխար դարձած հոտը Խոյ համաստեղության նկարագրությունն է: Այս չորս համաստեղության մասնաբաժինները գծապատկերային տեսքով իրենցից չորս սյուն են ներկայացնում, որոնք վերեւի հատվածում աղեղնագծով՝ Լուսավորչի ասած կամարով են իրար միանում, իսկ այդ չորս կամարներն իրար

---

[12] Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *Աշխարհակառույցը հայկական ավանդական մշակույթում (ըստ բանահյուսական նյութերի), տե՛ս «Հայկազյան հայագիտական հանդես», ԼԶ., 2016, էջ 401–430, 420, ծան. 110:*

[13] ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, § *737–738: Ս. Մնացականյանը խաչերի վրա հենված գմբեթի կամարները երեւակայական եւ կառուցողական տրամաբանությունից զուրկ է համարում, բայց միեւնույն ժամանակ նշում է, որ քառասյուն, գմբեթարդ կազմություն ունեցող կառույցները բնորոշ են ուշ անտիկ եւ վաղքրիստոնեական հուշակոթողային ճարտարապետությանը (տե՛ս* С. Мнацаканян, Крестовокупольные композиции Армении и Византии V–VII веков, Ереван, 1989, *էջ 43):*

[14] ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, § *739 – 740, 744:*



Նկ. 3 Զոդս սյուներից բաղկացած երկնային տաճարը՝ Այծեղջյուր, Ջրհոս, Ձկներ եւ Խոյ համաստեղություններով

հետ գմբեթ են կազմում, որոնց կատարը՝ ամենաբարձր կետը, գծագրորեն Խոյ համաստեղությունն է (տե՛ս նկ. 3), որտեղ էլ սրբազան աթոռն է դրված։

Գր. Լուսավորիչը հրեղեն սյունը կաթողիկե եկեղեցու, իսկ ջուրն անցած սեւ այծերի գունափոխումը որպես ջրով մկրտված մեղավորների մեղքերի թողության այլաբանություն է բացատրում[15], բայց նախապես պետք է հետեւյալ կերպ ընկալված լիներ. Այծեղջյուրում ձմեռային արեւադարձի կետն է գտնվում, որտեղ օրվա սեւ, մութ հատվածն իր ամենաերկար տեւողությանն է հասնում, այնուհետեւ աստիճանաբար կարճանալով՝ Խոյ համաստեղության գարնանային օրահավասարի կետում հավասարվում է լուսավոր հատվածի տեւողությանը, այսինքն՝ սպիտակ, լուսավոր ցերեկները, Այծեղջյուրից սկսած, երկարում են. սեւ Այծեղջյուրը դառնում է սպիտակ Խոյ։ Խոյից մինչեւ Կշեռք տիեզերական հրեղեն սյունն է ձգվում։

Կենդանակերպերի գոտում Կշեռքի կողքին Կույս համաստեղությունն է։ Մատենադարանի թիվ 3884 տոմարական-ախտարական ձեռագրում երկու համաստեղությունն էլ ծալապատիկ նստած աղջիկների տեսքով են պատկերված (տե՛ս նկ. 4 եւ 5)։ Երբ մոտավորապես 4200–2200 տարի առաջ, ըստ կենդանակերպի՝ անիվի պտույտի օրինաչափության, վերեւում թվարկված չորս համաստեղությունները՝ Այծեղջյուրը, Ջրհոսը, Ձկները եւ Խոյը, հորիզոնից վեր են գտնվել, Կշեռքն ու Կույսը չեն երեւացել, «գետնի տակ» են եղել՝ հորիզոնից ներքեւ՝ անդրաշխարհում։ Այդ է պատճառը, որ նրանց փոխարեն Գրիգոր Լուսավորիչը նահատակ Գայանե



Նկ. 4 Կշեռք համաստեղության պատկերը հայկական միջնադարյան ախտարական ձեռագրում

Նկ. 5 Կույս համաստեղության պատկերը հայկական միջնադարյան ախտարական ձեռագրում

[15] *Նույն տեղում, § 753։*

եւ Հռիփսիմե կույսերին է ներկայացնում։ Ինչպես կենդանակերպի երկնային տաճարն է գարնանամուտին «անդրաշխարհում գտնված» Կշեռքի հիմքի վրա բարձրացել, այնպես էլ Գրիգորի հիմնած Մայր տաճարի պաշտամունքային համալիրի մեջ մտնող երկրային մյուս երկու վանքերն են Գայանեի եւ Հռիփսիմեի նահատակման վայրերում կառուցվել[16]։

ԳԱՀԱԹՈՌԻ ԵՒ ՍՅԱՆ ԱՍՏՎԱԾԸ

Գրիգոր Լուսավորիչը երկնային լուսավոր Այրին՝ գահաթոռի եւ սյան ահեղ Աստծուն նկարագրելիս նկատի ունի Հիսուս Քրիստոսին (տե՛ս նկ. 6)։ Սուրբ Ծննդյան տոնին ցայժմ էլ եկեղեցիներում երգում են պատմահայր Մովսես Խորենացուն վերագրվող շարականը, որում Քրիստոսն Արդարության Արեգակն է. «Ծագեցիր Հորից՝ լուսավորելու արարածներին, Արդարության Արեգակ, Տե՛ր, փա՛ռք Քեզ»։ Ուրեմն Քրիստոսից առաջ Խոյ համաստեղության գահաթոռին բազմող եւ գարնամուտն ավետող աստվածն Արեւն է եղել, քանի որ կենդանակերպ տարեգոտում առանց նրա «ընթացքի» եղանակների փոփոխություն եւ գարնանամուտ չի կարող տեղի ունենալ[17]։

Նկ. 6 Սյան վրա բազմած Արդարության Արեգակ Հիսուս Քրիստոսը Երուսաղեմի Սուրբ Հարության եկեղեցում

---

[16] *Այս առումով հետաքրքրական է ազգագրագետ Լ. Սիմոնյանի՝ հայկական ավետիսների եւ հմայախոսությունների քննությունը. ուխտավորները գնում են խնկի ծառը, այսինքն՝ տիեզերական սյունը բերելու, որի վրա պետք է պահվի տիեզերքի անխախտ կառույցը (տաճարը)՝ տոմարը, քաղաքը, որը կառուցվում էր ըստ տիեզերքի մանրակերտի՝ կենտրոնի շուրջ բոլորվելով։ Այդ ծառը կենդանի էակ է, կացնով խփելիս ճչում է, սղոցելիս՝ արյունոտվում։ Այնքան ծանր է, որ 40 լուծ գոմեշ չեն կարողանում տանել։ Տանում է հանդերձյալ աշխարհը ներկայացնող Պառավի մոգին։ Այսինքն՝ տվյալ դեպքում նկարագրվող սյունը սերտորեն կապվում է իգական սկիզբ կրող աստվածության հետ (տե՛ս* Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, *Տոմարային ծիսաշար. Տոմար. Զմեռ. Նոր տարի եւ Սուրբ ծնունդ, հտ. 1, Երեւան, 2006, էջ 122, 124 – 126)։*

[17] *Ըստ ազգագրագետ Լ. Աբրահամյանի՝ Լուսավորչի տեսիլքում երկնային հրեղեն այրի հետեւում Ամպրոպի աստծո նախակերպարն է կանգնած։ Նրա հարվածի վայրը «սանդարամետ անդնդոցն» է, այսինքն՝ դժոխքը, ուրեմն հարվածի կրողը դժոխքի պետն է՝ Վիշապը։ Ամպրոպի աստվածը վերածվել է Հիսուս Քրիստոսի, իսկ Նրա կայծակ զենքը դարձել է կռան (տե՛ս* Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, *Զոհի մարմնից աճող երկնային տաճարը. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը ազգագրական տեսանկյունից («Հայոց սրբերը եւ սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երեւան, 2001, էջ 364–365)։ Աղբյուրից բխող ջրի, ծովի, գագաթին խաչով պսակված սյան նկարագրությունները հաշվի առնելով՝ տեսարանը նա նույնաց-*

Հայկական լեռնաշխարհում Արեւ աստծու մասին ամենահին հիշատակությունն Արարատյան թագավորության (Վանի թագավորություն, Բիայնիլի, Ուրարտու) սեպագրերից է հայտնի։ Վանկագրով վկայված է երկու անգամ։ Մեկը Վանա լճի հյուսիսարեւելյան կողմում գտնվող ներկայի Բերկրի-Մուրադիե բնակավայրի հարավարեւմտյան կողմի Կարահան հնավայրից հայտնաբերված Մենուա արքայի արձանագրության մեջ է՝ dŠi–i–u–i–ni *վանկագրով։ Բնագիրը հետեւյալ կերպ են կարդում. «Իշպուինիի որդի Մենուան այս սյունը (*pu–lu–si-ù.– Գ. Մ.*) կանգնեցրեց (՞)։ Թող լինի Շիվինի աստծուց Մենուային՝ Իշպուինիի որդուն, Ինուշպուային՝ Մենուայի որդուն կյանք, ուրախություն, մեծություն»[18]։ Հաջորդն Արճեշից հարավ-արեւմուտքում՝ Վանա լճի հյուսիսարեւելյան ծոցի մոտ գտնվող ներկայի Զելեբի-Բաղիի Արգիշթի Բ.-ի թողած արձանագրության մեջ է՝ վնասված, դարձյալ սյան վրա, դարձերեսին։ Պահպանվել է միայն Շիվինիի անունը՝ Արարատյան թագավորության դիցարանի մյուս երկու գերագույն աստվածների՝ Խալդիի եւ Թեյշեբայի անուններից հետո՝* dŠi–u–i–ni–i–e *գրությամբ[19]։ Այստեղից էլ եզրակացնում են, որ Արեւ աստծու անունը Շիվինի է, քանի որ նրա անունը Մհերի դռան արձանագրության աստվածների գերագույն եռյակի աստիճանակարգում նույնպես երրորդն է նշված՝* dUTU *շումերագրամով[20]։ Արեւ աստծու ամենավաղ հիշատակումը հենց այս՝ Ք. ծ. ա. 820–810 թվականներին Մենուա եւ Իշպուինի արքաների համատեղ գահակալման շրջանից է մեզ հասել, երբ Մհերի դռան դիցացանկն է կազմվել[21]։*

րել է առնվազն Ե. դարից հանդիպող մկրտության վերաբերյալ մանրանկարներին, որոնցում Վիշապի եւ Ամպրոպի աստծու մենամարտից հետո Վիշապը պարտություն է կրում, իսկ ջրից վեր է խոյանում տիեզերական սյունը (ծառը)՝ axis mundi-*ն՝ հասնելով երկնքին (տե՛ս* Լ. Աբրահամյան, *Քրիստոսը որպես վիշապամարտիկ. եկեղեցական ավանդույթը եւ նկարչի հիշողությունը («Վիշապը հեքիաթի եւ իրականության սահմանին, Երեւան, 2019, էջ 361–370)։ Այս ուշագրավ մեկնաբանության մեջ, սակայն, հարց է մնում այն, որ եթե Ե. դարից սկսած՝ այդքան առատորեն տարածված էին Քրիստոսից պարտված ջրային վիշապին պատկերող մանրանկարները, ապա Ե. դարի պատմիչ Ագաթանգեղոսին ինչն է խանգարել գոնե մեկ անգամ տալ կռանի հարվածից սպանված Վիշապի անունը։*

[18] *Տե՛ս* Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, *121, տող 1, 4։*

[19] *Նույն տեղում, 407, տող 28։*

[20] *Նույն տեղում, 38, տող 4։*

[21] *Տե՛ս* M. Badalyan, Šiuini: The Urartian Sun god («Over the Mountains and Far away. Studies in NearEastern history and archaeology»), England, Oxuniprint, Oxford, 2023, *էջ 46–47)։*

Արմեն Պետրոսյանը Šiwini *դիցանվան հիմքը սիւ/սեւ կազմությունն է համարել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուրարտական սեպագրերում* S *հնչյունը հաղորդվել է* š*-ով, իսկ հայոց լեզվում «եւ» եւ «իւ» երկբարբառները հերթագայում են: Նա համարում է, որ դիցանունը փոխառված է խեթերենին մոտ մի լեզվից՝ ի նմանություն նրանց* šiu – (šiuni, šiuanni, šiuna*) «աստված», հնում՝ «Արեւի աստված» դիցանվանաձեւերի, որոնց համեմատում է* šwatt – *«ցերեկ»* < *dyeu *լուսավոր երկնքի աստծու անվանը*[22]*:*

Իրականում այնքան էլ հստակ չէ, թե Արարատյան թագավորությունում ինչպես է հնչել Արեւ աստծու անունը: Սեպագրերում մի դեպքում «աստված» ցուցիչով հաղորդված է շումերական Արեւ աստծու գաղափարագիրը, մյուս երկու դեպքերում՝ դարձյալ «աստված» ցուցիչով՝ «սիւինի» կամ «սիւինե» հնչյունագրերը, որոնք, անհավանական չէ, որ բնիկ հայերեն «սիւն» բառի[23] *նախաձեւերն են: Հնարավոր է, որ վանկագիր ձեւերում «աստված» ցուցիչով գաղափար է հաղորդվում այն մասին, որ խոսքը սյան աստծու մասին է, այսինքն՝ ոչ թե Արեւ աստծու անունը, այլ նրա անվան վերադիր-մակդիրն է փոխանցվում: Պատահական չէ, որ երկու դեպքում էլ սյան աստվածը հիշատակված է* pu–lu–si *կոչվող կոթողների վրա, որոնց բարձրությունը երբեմն 3 մետրից ավելին է եղել*[24]*, հետեւաբար, դրանք կարող էին սյան գաղափարն արտահայտել: Հատկանշական է, որ* pu–lu–si*-ները, որպես կանոն, վերեւում կամարաձեւ տեսք ունեն, ինչպես որ կենդանակերպի համաստեղությունների գծապատկերային մասնաբաժիններն են վերեւում կամարաձեւ:*

Հետաքրքիր է, որ պատմական Ծղուկ գավառի մեջ մտնող Սյունի բնակավայրում, որը ներկայի Սիսիան քաղաքն է, կանգնած է եղել Զ.–Է. դարերի խաչաձեւ կենտրոնագմբեթ մի եկեղեցի: Քանի որ հին անունը մոռացված էր, նորագույն ժամանակներում կոչել են Սբ. Հովհաննես, բայց պատին արված արձանագրության մեջ ասվում է. «Սինի (Սյունի.– Գ. Մ.) վանից եկեղեցի»[25]*: Սա հաստատվում է Սյունիքի պատմիչ Ստեփա-*

---

[22] Ա. Պետրոսյան, *Հայոց ազգածագման հարցեր, Երեւան, 2006, էջ 45:*

[23] *Սերում է հնդեւրոպական* *kīyōn *արմատից եւ պահպանվել է միայն հայերենում եւ հունարենում (տե՛ս* Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, հտ.* IV, *Երեւան, 1979, էջ 221):*

[24] *Հայկական ճարտարապետության պատմություն, հտ. Ա., Երեւան, 1996, էջ 174:*

[25] Ս. Բարխուդարյան, *Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, Երեւան, 1960, էջ 85:*

նոս Օրբելյանի վավերագրությամբ. «Սիւնի վանք որոյ եկեղեցին չքնաղ եւ նորակերտ ձեւով կանգնեալ գմբեթայարկ խորան երկնանման...»[26]: Հայտնի է, որ վանքի բարեկարգման աշխատանքների ժամանակ արեւմտյան մուտքի մոտ հեթանոսական բագին է հայտնաբերվել, հետեւաբար անուն էլ կարող էր հեթանոսական ժամանակներից փոխանցված լինել:

Ստ. Օրբելյանը հիշատակում է ոմն Սյունյաց նախարար «Սիւնի»-ի, որը հյուրընկալել էր Գր. Լուսավորչին[27]: «Սիւնի» էր կոչվում նաեւ Ե. դարում Հայաստանի մարզպան, պարսիկների կողմն անցած սյունեցի Վասակը: Եթե «Սիւնի» ասելով՝ նրա սյունեցի լինելն են կամեցել ցույց տալ, ապա կարող էին Վասակ Սյունեցի ասել, ինչպես որ եղել են, օրինակ, Մխիթար Սեբաստացի, Հովհան Օձնեցի, Գրիգոր Տաթեւացի եւ այլք, բայց պատմության մեջ նրա անունը հենց այդ վերադիրով է ավանդվել, ինչը չի բացառվում, որ նրա արեւապաշտության վկայությունն է:

Ուշագրավ է, որ Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Ավարայրի հերոս Վարդանի մահից հետո պարսիկները սրերը մերկացրած շրջում էին հայ զորականների մեջ եւ ստիպում էին «բանիւ միով ուրանալ զՔրիստոս եւ գլուխ կորացուցանել արեգական»[28]: Այսինքն՝ պարսիկները, այնուամենայնիվ, Արեւի պաշտամունքն էլ են կամեցել վերահաստատել հայոց մեջ:

Սյունիքի Թանահատ գյուղում հայտնաբերված մի դժվար ընթեռնելի արձանագրության մեջ, ըստ Միրյո Սալվինիի, հիշատակված է Արեւ աստծու կայազորը, որն աջակցել է Ամուշա երկրի դեմ ուղղված արշավանքին[29]: Այդ կայազորին, ըստ երեւույթին, համարժեք պետք է եղած լինեին հետագայի Հին Կտակարանի հրեշտակներից բաղկացած «Աստծու բանակը» (Ծննդոց, ԼԲ. 2) եւ Լուսավորչի տեսիլքի երկնային լուսեղեն զորքը: Աստվածաշնչյան երկնային զորքը Հին Կտակարանում Եղիսե մարգարեի աղոթքով կուրացնում է սիրիական զիվորներին, որոնք դրանից հետո փոխում են իսրայելցիների վրա հարձակվելու իրենց մտադ-

---

[26] *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, ԿԲ.:*

[27] *Նույն տեղում, Ե.:*

[28] *Նույն տեղում, ԺԹ.:*

[29] *Տե՛ս* M. Salvini, Corpus Dei Testi Urartei, volume I, Le Inscrizioni su Pietra e Roccia (Documenta Asiana 8/1). Roma, 2008: CNRIstituto di studi sulle civilta dell, Egeo e del Vicino Oriente, A 11–3 Vo21:

րությունը (Դ. թագ. 6)։ Ըստ էության՝ սիրիական զորքին հետ պահողն Արեւի կուրացուցիչ ճառագայթները պետք է եղած լինեին։

Վերադառնալով Մհերի դռան դիցացանկում նշված dUTU–ITU – *«Արեւի աստծու ամսին»*[30]*՝ հարկ է ասել, որ այս ամիսը Հ. Կարագյոզյանը համադրելի է համարել հայոց «Արեգ» ամսանվանը*[31]*։ Արձանագրության մեջ ասվում է, որ* dUTU–ITU *ամսին Խալդի աստծուն 6 ուլ պետք է զոհաբերվի։ Սիմոն Հմայակյանը հաշվի առնելով, որ այծերը ծնում են տարվա մեջ մեկ անգամ՝ փետրվար եւ մարտ ամիսների ընթացքում, եզրակացրել է, որ փետրվարի վերջերին եւ մարտի սկզբներին պետք է ուլեր գտնեին զոհաբերելու համար։ Նույն արձանագրությունում նշվում է, որ Իշպուինին եւ Մենուան կարգ են սահմանում, որ երբ ծառերն ու խաղողի ճյուղերն էտվեն, Խալդի աստծուն թող երեք խոյ զոհաբերվի եւ երեք խոյ՝ բոլոր աստվածներին։ Ս. Հմայակյանն այս փաստի կապակցությամբ էլ նկատել է, որ խոսքը դարձյալ մարտ ամսին է վերաբերում, քանի որ Հայաստանում այդ ամսվա վերջին տասնօրյակում եւ ապրիլի առաջին կեսում են էտում կատարում*[32]*։ Այս դիտարկումները նույնպես գալիս են հավաստելու, որ Սյան աստվածը գարնանամուտի Արեւ աստծու համարումն է ունեցել։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչո՞ւ է Լուսավորչի տեսիլքի հրեղեն այրը մուրճով խփում այն վայրին, որտեղ հետագայում երկրային տաճարը պետք է կառուցվեր։ Կարելի է ենթադրել, թե տեղի հեթանոսական տաճարն է կործանում, մանավանդ որ էջմիածնի ավագ խորանում իրականում էլ հեթանոսական կրակարան կա[33]*։ Ագաթանգեղոսը հաղորդում է, որ մեհյանները մուրճերով են քանդել. «Եւ մինչ դեռ զշինուած մատրանն կազմէին՝ հրաման ետ Գրիգոր զորականին եւ իշխանացն որ ընդ իւրն էին, զի ելցեն եւ մրճօք*

---

[30] *Տե՛ս* Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, *38, տող 2։*

[31] *Հ. Կարագյոզյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի եւ հարեւան պետությունների մասին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հտ. 1, Երեւան, 1981, էջ 47, ծան. 1)։*

[32] *Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երեւան, 1990, էջ 10, 44–45, 76–77։*

[33] *Ս. Մնացականյանը կարծում է, որ էջմիածնի տաճարի տեղում Սանդարամետի տաճարն է եղել, որը կործանել են նորընծա քրիստոնյաները (տե՛ս* С. Мнацаканян, Крестово-купольные композиции Армении и Византии V–VII веков, Ереван, 1989, *էջ 43)։*

տապալեսցեն զշինուածս բագնացն»[34]։ Բայց տաճարի մասին Ագաթանգեղոսը ոչ մի խոսք չի ասում։ Դրա փոխարեն ասում է, որ հարվածն ուղղված էր քաղաքի մեջտեղի լայնատարած գետնին, որի հետեւանքով երկիրը տափակացավ «եւ մեծ եւ անչափ դրնդիւնք հնչեցին ի սանդարամետս անդնդոց»[35]։

Թվում է, թե այս նկարագրության մեջ մուրճի հարվածի թափը, առաջացրած որոտ-դղրդյունը պարզապես քրիստոնեական տաճար հիմնելու վերաբերյալ հրեղեն այրի հորդորին անբեկանելիություն եւ հանդիսավորություն հաղորդելու համար է հնարված։ Մյուս կողմից էլ՝ մուրճը ոչ միայն քանդելու, այլեւ կառուցելու գործիք է։ Եթե հին՝ նախաքրիստոնեական առասպելաբանաստեղծական մտածողությամբ՝ քաղաքի կենտրոնն իբրեւ տիեզերքի կենտրոն ընդունենք, ինչպես շումերներն էին երկնային գահն այդ կենտրոնում պատկերացնում, ապա հնագույն տիեզերածին առասպելաբանաստեղծական ըմբռնումների համաձայն՝ այդ վայրն անհրաժեշտաբար ամեն նոր տարեմուտին պետք է նորոգվեր, այլապես քայքայվող եւ քաոսի վերածվող աշխարհը վերջնականապես կկործանվեր։ Միրչա Էլիադեն այս աշխարհընկալումը ցույց է տալիս կալիֆոռնիական հնդկացիների «Աշխարհի նորոգում» կոչվող նոր տարվա տոնի օրինակում։ Յուրոկ ցեղը ծիսական խրճիթ էր պատրաստում։ Կրոնի սպասավորն ավլում էր սրբազան վայրը եւ սար էր բարձրանում։ Այնտեղ ծառի ճյուղ կտրելով՝ ասում էր. «Աշխարհը ճաք է տվել, բայց երբ ես իմ այս մահակը թափահարեմ երկրի վրա, բոլոր ճաքերը կփակվեն, եւ երկիրը նորից կպնդանա»։ Հետո իջնում, նստում էր քարին եւ ասում էր. «Երկիրը սասանվել է։ Մենք նորից կամրացնենք, եւ կյանքը երկար կլինի, իսկ մարդիկ՝ ուժեղ»[36]։

Գր. Լուսավորչի տեսիլքի արդյունքում շինվող տաճարն էլ այս վաղնջական աշխարհընկալման սահմաններում է տեղավորվում։ Նոր տաճար հիմնելու հորդորով հայտնված հրեղեն այր Քրիստոսից առաջ նրա տեղում գարուն եւ նոր տարի բերող աստվածն է կանգնած եղել, որի գահը եւ տաճարն անհրաժեշտաբար պետք էր նորոգել։ «Սասնա ծռեր» էպոսում այդ աստվածը Սասունցի Դավիթն է՝ Միհր Արեւի որդին, որի որդին

---

[34] Ագաթանգեղոս, § *812։*

[35] *Նույն տեղում,* § *735։*

[36] *Տե՛ս* М. Элиаде, Аспекты мифа, Москва, 2016, *էջ 52–53։*

նույնպես Միհր Արեւն է։ Երբ նա Մսրրից Սասուն է վերադառնում, հորեղբայր Օհանը երազ է տեսնում. «Էսօր մեր քաղքի պարիսպ կայներ էր, // Մեր թազա բաղ կանաչեր էր, // Մեր ջահեր քաղքի պարսպին վառվեր էր, // Մեր բաղի բլբուլ կանչեր էր. // Կա չկա մեր որբ Դավիթ մեջ մեր հողին մտեր է»[37]։ Գարնան գալստյան ցուցիչը, ուրեմն, Դավթի գալստյամբ է որոշվել։

Դավիթը նույնպես տաճարաշինարար է։ Նա Ծովասարում վերաշինում է հոր կառուցած Մարութա Բարձր Աստվածածին վանքը, որն ավերակ էր դարձրել քառասային ուժերի խորհրդանիշ Մսրա Մելիքը։ Ճիշտ է՝ վանքն իրականում Ծովասարում չէ, այլ Մարութա լեռան վրա, բայց էպոսը տեղափոխել է Ծովասար, որովհետեւ գագաթին ջրային ավազան կա։ Մենք հիշում ենք, որ Լուսավորչի տեսիլքում էլ երկնային տաճարի տեսարանին աղբյուրի եւ կապուտակ ծովի գոյացումն էր հաջորդում։ «Սասնա ծռեր»-ի Սանասարն ու Բաղդասարն էլ իրենց «Սան սուն» (Սյունի վրա բարձրացող սյուն) Սասնա բերդն էլ աղբյուրի ջրի ակի պռնկին են կառուցում[38]։ Մարութա վանքի հիմքում Դավիթն իր թուրն է դնում, որն ընդհանրապես խաչի տեսք ունի, հետեւաբար նույնը պետք է լիներ, ինչ Լուսավորչի տեսիլքի սյան խորհրդանշական խաչը, այսինքն՝ ուղղահայաց եւ հորիզոնական ուղղություններով խաչաձեւ հատվող օրահավասարների եւ արեւադարձերի կետերի պատկերը։

Այն, որ Մհերի դռան արձանագրությունում Վանի թագավորների պաշտած ամենամեծ քանակի աստվածներն են հիշատակված, եւ որ նշված է, թե այդ աստվածներից որին ինչ զոհաբերություն պետք է կատարել Արեւի աստծու ամսին, Վանի թագավորությունում այդ ամսին տրված բացառիկ նշանակության մասին է վկայում։ Եթե Գրիգոր Լուսավորչի տեսիլքի սյան խոյակից պարզ է դառնում, որ նախաքրիստոնեական Հայաստանում Խոյ համաստեղությանը համապատասխանող մարտ ամսին է պատկերացվել Արեւի գահը՝ տիրապետությունը երկնքում, իսկ քրիստոնյա Հայաստանում այդ գահը վերագրվել է Հիսուս Քրիստոսին, ուրեմն այդ օրացուցային պատկերացումը, անընդհատ պահպանվելով, հասել է մինչեւ Գրիգոր Լուսավորչի ժամանակներ։ Հետեւաբար կարող ենք եզրակացնել, որ առնվազն գոնե մինչեւ Դ. դարը Հայաստանում

[37] Սասունցի Դավիթ. Հայկական ժողովրդական էպոս, 1961, Երեւան, 1961, էջ 230–233։
[38] Նույն տեղում, էջ 25–26, 38։

լուսնաարեգակնային օրացույց է գոյություն ունեցել, որի համաձայն՝ գարնան առաջին ամիսը տարեգլուխ է համարվել։

Մյուս կողմից՝ չպետք է անտեսել այն, որ Գրիգոր Լուսավորչի ժամանակներում գարնանային օրահավասարի կետի՝ Խոյ համաստեղությունից Ձկներ համաստեղություն տեղափոխվելու կապակցությամբ փոխվել էին երկնային տաճարի վերաբերյալ նախաքրիստոնեական շրջանի օրացուցային-կենդանաշրջանային պատկերացումները. գարնան առաջին ամիսը կենդանակերպ գոտում արդեն ավելի շուտ Ձկներ, քան Խոյ համաստեղության մասնաբաժնին էր վերաբերում։ Ուստի այս հանգամանքը չէր կարող դեր խաղացած չլինել քրիստոնեությունը պետականորեն հաստատվելու գործում։ Այդ մասին անուղղակիորեն վկայում է հրեղեն այրի մուրճի հարվածի թափը, որի հետեւանքով ամբողջ երեւացող երկիրը դաշտաձեւ տափականում է։ Դա նշանակում է, որ ի չիք էին դառնում երկնային տաճարի հետ կապված կրոնական եւ օրացուցային հին պատկերացումները, եւ դրանց փոխարեն հաստատվում էր նոր, կենդանաշրջանի հետ առանձնապես կապ չունեցող, համապարփակ կրոնի բարոյախոսությունը։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Տարեմուտ, օրացույց, կենդանաշրջան, տաճար, սյուն, Արեւ, Արդարության Արեգակ։

РЕЗЮМЕ

В видении армянского святого Григория Просветителя описан небесный храм, на вершине которого первоначально была изображена куполообразная часть зодиакальной карты от Козерога до Овна, с 4 созвездиями. Три из них: Козерог, Водолей и Рыбы – зимние месяцы декабрь, январь и февраль. Четвертое созвездие, Овен, образующее вершину купола, – это первый месяц весны, где находится престол Бога Солнца и где он будет править до наступления следующей зимы. В христианской Армении роль Солнца была передана Иисусу Христу, которого в средние века считали Солнцем справедливости.

Бог Солнца у армян был связан с идеей столпа. Хотя Григорий Просветитель использует аллегорию этого столба как «католической церкви», рассмотрение его видения показывает, что мы имеем дело с дохристианским пониманием небесной оси, отделяющей новый год от старого года. Эта ось является опорой небесного храма. образованного на созвездии Овна. Он же первый месяц весны, который связан с мировосприятием, связанным с обновлением Вселенной и пробуждением жизни.

Идеи восстановления небесного храма и божественного престола совпадают с представлениями о первом месяце весны Ниппурского лунно – солнечнего календаря Шумера.

SUMMARY

The vision of Saint Gregory the Illuminator of Armenia described a heavenly temple, on top of which was originally depicted a dome-shaped portion of the zodiacal chart from Capricorn to Aries, with four constellations. Three of them: Capricorn, Aquarius and Pisces are the winter months of December, January and February. The fourth constellation, Aries, which forms the apex of the dome, is the first month of spring. It houses the throne of the Sun god, where he will rule until the next winter. In Christian Armenia, the role of the Sun was transferred to Jesus Christ, who was considered the Sun of Justice in the Middle Ages.

The Armenian Sun god was associated with the idea of a pillar. Although St. Gregory the Illuminator uses an allegory of this pillar as the “Universal Church,” a consideration of his vision shows that we are dealing with a pre-Christian understanding of the celestial axis separating the new year from the old year. This axis is the support of the heavenly temple formed on the constellation Aries. It is also the first month of spring, which is associated with a worldview associated with the renewal of the universe and the awakening of life.

The ideas of restoring the heavenly temple and the divine throne coincide with the ideas about the first month of spring of the Nippur lunisolar calendar of the Sumerians.